ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական Բանկում 50/50
Վարչության նախագահի
առաջին տեղակալ՝

Ա. Ռ. Դարբինյան

,,30,, մարտի ,, 1994թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ – ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բաժնետերերի Ընդհանուր
Ժողովով
արձանագրությունն N 11
Խորհրդի նախագահ՝

Վ. Ավանեսյան

02 մարտի 1994թ.

Ք. ԵՐԵՎԱՆ

1994

ՀՈԴՎԱԾ 1. ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՊԱՇՏՈՆԱՎԱՅՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Հայկական ներմուծման արտահանման բանկը՝ հետագայում հիմնադիր փաստաթղթերում - ,,ԲԱՆԿ,, , սփեղծվել է 1992թ. հուլիսի 24-ին կնքված Հիմնադիր Պայմանագրով, որպես փակ բաժնետիրական ընկերություն:

2. Բանկի լրիվ պաշտոնական անվանումը հայերեն լեզվով՝
Հայկական Բաժնետիրական Ներմուծման - Արտահանման Բանկ:
Բանկի լրիվ պաշտոնական անվանումը ռուսերեն լեզվով՝
Армянский Акционерный Импортно-Экспортный Банк
Բանկի լրիվ պաշտոնական անվանումը անգլերեն լեզվով՝
Armenian Share Holders Import Export Bank.
Բանկի կրճատ անվանումը հայերեն լեզվով՝ ,,ՀԱՅՆԵՐՄՏԲԱՆԿ,,
Բանկի կրճատ անվանումը ռուսերեն լեզվով՝ ,,АРМИМПЕКСБАНК,,
Բանկի կրճատ անվանումը անգլերեն լեզվով՝ ,,ARMIMPEXBANK,,

3. Բանկի փաստաթղթերը եւ արձանագրությունները նախատեսված երրորդ անձանց համար, մասնավորապես նամակները եւ այլ փաստաթղթերը, պետք է պարունակեն Բանկի անվանումը:

4. Բանկի իրավաբանական հասցեն է.
Հայաստանի Հանրապետություն
ք. Երեւան - 375010
Նալբանդյան - 2 :

5. Բանկը հիմնադրվում է անորոշ ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Բանկի գործունեության նպատակներն են՝ աջակցել եւ նպաստել
- հիմնարկ-ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ներմուծման եւ արտահանման գործունեության ծավալմանը եւ արգասավորմանը,
- միջազգային կազմակերպությունների, համապատեղ ձեռնարկությունների գործունեության ընդլայնմանը,
- ՀՀ տարածքում եւ դրանից դուրս գործող հիմնարկ-ձեռնարկությունների եւ կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից) գործունեության խթանմանը:

2. Բանկի գործունեության առարկան պարունակում է հետեւյալ գործառնությունները՝

ա) բացել եւ վարել հաճախորդների, բանկերի (թղթակցող) հաշիվներ,

բ) կատարել հաշվարկներ հաճախորդների եւ բանկերի (թղթակ-ցող) հանձնարարությամբ,
գ) հաճախորդների հանձնարարությամբ ներգրավել եւ տեղաբաշխել միջոցներ, կառավարել արժեթղթեր (լիազորական գործառնու-թյուններ),
դ) ներգրավել եւ տեղաբաշխել դրամական ավանդներ,
ե) ներգրավել եւ տրամադրել վարկեր,
զ) երրորդ անձանց փոխարեն եւ նրանց հանձնարարությամբ տալ երաշխավորություններ, երաշխիքներ, ինչպես նաեւ սպանձնել այլ պարտավորություններ,
է) ձեռք բերել ապրանքների մատակարարման եւ ծառայությունների կատարման դիմաց գումարներ պահանջելու իրավունք, իր վրա վերցնել այդպիսի պահանջների կատարման ռիսկը եւ կատարել դրանց ինկասացիան (ֆակտորինգ),
ը) սեփական միջոցների հաշվին ձեռք բերել եւ վարձակալության տալ սարքավորումներ եւ մեքենաներ (լիզինգ),
թ) սեփական միջոցների հաշվին գնել եւ վաճառել արտարժույթ,
ժ) գնել, վաճառել եւ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր եւ այլ արժեքներ,
լ) թողարկել, գնել /սեփական միջոցների հաշվին/, վաճառել եւ հաշվառել վճարային փաստաթղթեր եւ արժեթղթեր /չեկեր, ակրեդիտիվներ, մուրհակներ, բաժնետոմսեր, պարտատոմսեր եւ այլն/,
խ) ֆինանսավորել կապիտալ ներդրումներ՝ ներդրում կատարողների կամ կարգադրիչների հանձնարարությամբ:
ի) մատուցել խորհրդատվական ծառայություններ:

Սույն հոդվածով նախատեսված գործառնությունները Բանկը կարող է կատարել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով, այնպես էլ արտարժույթով:

Բանկը արտարժույթով գործառնությունները կարող է կատարել միայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից տրված այդպիսի արտոնագրի առկայության դեպքում:

Բանկը արժեթղթերով, ինչպես նաեւ գործառնությունները թանկարժեք մետաղներով եւ քարերով կատարում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագիր ստանալուց հետո:

Բանկի գործունեությունը չի սահմանափակվում Կանոնադրությամբ վերապահված գործառնություններով: Կանոնադրական գործունեության սահմաններից դուրս եկող, բայց գործող Օրենսդրությանը չհակասող գործառնությունները համարվում են իրական:

ՀՈԴՎԱԾ 3. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Բանկը իրավաբանական անձ է հանդիսանում համաձայն ՀՀ ,,Բանկերի եւ բանկային գործունեության մասին,, օրենքի:

2. Բանկի իրավաբանական կարգավիճակը սահմանվում է ՀՀ ,,Բանկերի եւ բանկային գործունեության մասին,, օրենքով, Հիմնադիր Պայմանագրով եւ սույն Կանոնադրությամբ:

3. Բանկը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցվելու պահից:

ՀՈԴՎԱԾ 4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

1. Բանկի բաժնետերեր, բացառապես սեփական միջոցների հաշվին, կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտասահմանյան հիմնարկ-ձեռնարկություններ, կազմակերպություններ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններ եւ քաղաքացիներ, որոնք պարտավորվում են կատարել հիմնադիր փաստաթղթերի պայմանները, Բանկի մարմինների որոշումները եւ Կանոնադրական ֆոնդին մուծումները, ձեռք բերելով բաժնեփոմսեր:

2. Բանկը, որպես բաժնետիրական ընկերություն կարող է այլ բանկերի մասնակից լինել:

ՀՈԴՎԱԾ 5. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Բանկի հիմնադիրներն են հանդիսանում՝

1. ,,Սովյուգինսպրոյ,, համատեղ ձեռնարկությունը,
2. ՀՀ Ֆինանսների նախարարությունը,
3. ,,Հայէկոնոմբանկը,, ,
4. ,,Թալին,, համատեղ ձեռնարկությունը,
5. ,,Մեկուքս,, հայկական արտադրական միավորումը,
6. ,,Նոյ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
7. ,,Հայկոնտակտ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
8. ,,Երեւան-Պարտնյոր,, ֆիրման,
9. ,,Հայտեքս,, համատեղ ձեռնարկությունը,
10. ,,Մասիս,, առեւտրային բանկը,
11. ,,Անելիք,, առեւտրային բանկը,
12. ,,Դելտա,, բաժնետիրական ընկերությունը,
13. ,,ՐՈՐ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
14. ,,Ինգոստրախ,, ապահովագրական բաժնետիրական ընկերությունը,
15. ,,Շարժ,, փոքր ձեռնարկությունը,

16. ,,Հեռուսպաշին,, ֆիրման,

17. ,,Սլար,, համատեղ ձեռնարկությունը,

18. ,,Սլկարին,, համատեղ ձեռնարկությունը,

19. ,,Արարատ,, սպորտային արդադրական - առեւտրային ասոցիացիան,

20. ,,Շիրակ,, կոնցեռնը,

21. Սպարտակ Տիգրանի Հովսեփյանը,

22. Սեդա Գարուշի Հարությունյանը,

23. Ռուզաննա Սերգեյի Հայրապետյանը:

Բանկի հիմնադիրները հանդիսանում են Բանկի բաժնետերեր:

ՀՈԴՎԱԾ 6. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն.

ա) մասնակցել Բանկի գործերի ղեկավարմանը,
բ) սպանալ Բանկի գործունեությունից գոյացած շահույթի որոշակի մասը, համամասնորեն իրենց պարկանող բաժնեթղթերին,
գ) սպանալ տեղեկություններ Բանկի գործունեության վերաբերյալ, այդ թվում, ծանոթանալ հաշվեկշռի, հաշվեքննության եւ այլ փինանսական փաստաթղթերի փվյալների հետ,
դ) սպանալ Բանկի բոլոր տեսակի ծառայություններից օգտվելու նախապատվության իրավունք:

2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.

ա) կատարել իրենց պարկանող բաժնեթղթերի գնումը, Հիմնադիր Պայմանագրի 7-րդ կետին համապատասխան,
բ) չհրապարակել Բանկի գործունեության հետ կապված գաղտնի տեղեկություններ,
գ) ճշտությամբ կատարել հիմնադիր փաստաթղթերի դրույթները,
դ) կատարել իր վրա վերցրած պարտավորությունները Բանկի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԸ, ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

1. Բանկի Կանոնադրական Ֆոնդը (Հայտարարված Կապիտալը) հավասար է 500,000 հազ. ռուբ., որը կազմված է 1000 հատարակ անվանա-

կան բաժնեփոմաներից, յուրաքանչյուրը՝ 500 հազ. ռուբլի արժողությամբ: Բանկի յուրաքանչյուր բաժնեփերին պարկանող բաժնեփոմաների անվանական արժեքը հանդիսանում է նրա ավանդը Բանկի Կանոնադրական Ֆոնդում:

2. Բաժնեփերերի (հիմնադիրների) ներդրումները կարող են կարարվել՝ Հայասփանի Հանրապեփությունում պաշփոնապես շրջանառության մեջ գփնվող դրամով, արփարժույթով, անշարժ գույքով, այլ նյութական արժեքներով:
Արփարժույթային ներդրումները գնահաղվում են Հայասփանի Հանրապեփությունում պաշփոնապես շրջանառության մեջ գփնվող դրամով՝ հաշվարկված ՀՀ Կենփրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային կուրսով: Անշարժ գույքը եւ այլ նյութական արժեքները արփահայղվում են Հայասփանի Հանրապեփությունում պաշփոնապես շրջանառության մեջ գփնվող դրամով: Գնահաղումը կարարվում է բաժնեփերերի համաձեղ որոշմամբ եւ վերադարձվում է միայն դրամական փեսքով:

3. Բանկի բաժնեփերերի ներդրումները Կանոնադրական Ֆոնդում պեփք է լինեն ոչ պակաս, քան 500 հազ. ռուբլի: Բանկի նոր բաժնեփերերը, որոնք ձեռք են բերում բաժնեփոմաներ, պեփք է վճարեն բաժնեփոմաների լրիվ արժեքը Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի որոշման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

4. Բանկի հիմնադիր-բաժնեփերերը պարփավոր են վճարել Բանկի Կանոնադրական Ֆոնդի 50 % մինչեւ 01.03.94թ.: Ֆոնդի մնացած մասը կարող է վճարվել մինչեւ 01.08.94թ.:

ՀՈՂՎԱԾ 8. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ

1. Բանկը Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է մեծացնել Կանոնադրական Ֆոնդը, եթե բոլոր թողարկված բաժնեփոմաներն իրենց անվանական արժեքով ամբողջովին վճարված են:

2. Կանոնադրական Ֆոնդի մեծացումն իրականացվում է նոր բաժնեփոմաներ գրանցելու, փոխառության փոմսերը բաժնեփոմաների վերածելու, ինչպես նաեւ բաժնեփոմաների անվանական արժեքը մեծացնելու միջոցով:

3. Կանոնադրական Ֆոնդի փոքրացումը կարող է կարվել Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ հեփեւյալ եղանակներով՝
   - բաժնեփոմաների փոխանակման, մարման կամ դրանց թվաքանակի կրճափման (բաժփեմաների միաձուլման) միջոցով,
   - շրջանառությունից բաժնեփոմաները հանելու եւ դրանց փերերին հասանելիք մուծումներ կարելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

1. Բանկը կարող է թողարկել անվանական հասարակ եւ անվանական արտոնյալ բաժնեփոմսեր:

2. Հասարակ անվանական բաժնեփոմսը (500 հազ. ռուբլի անվանական արժեքով) Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի հարցերի որոշման ժամանակ բաժնեփիրոջը փալիս է մեկ ձայնի իրավունք եւ մասնակցում է շահույթի համամասնական բաշխմանը:

3. Արտոնյալ բաժնեփոմսը Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի հարցերի որոշման ժամանակ բաժնեփիրոջը ձայնի իրավունք չի փալիս: Արտոնյալ բաժնեփոմսերի դիմաց վճարվում է ֆիքսված շահաբաժին, որը սահմանվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովով, բաժնեփոմսերի թողարկման մասին որոշում ընդունելու պահին:

4. Բանկում վարվում է բաժնեփերերի գրանցման մարյան: Այն պարունակում է՝ բաժնեփիրոջ անվանումը, հասցեն, բաժնեփոմսի անվանական արժեքը, ձեռք բերման գինը եւ այլ փվյալներ:

5. Բաժնեփիրոջը ձեռք բերված բաժնեփոմսերի դիմաց կարող է փրվել սերփիֆիկատ: Բաժնեփոմսի սերփիֆիկատը արժեթուղթ է, որը հանդիսանում է բաժնեփոմսերի որոշ քանակի սեփականատեր լինելու վկայական:

6. Սերփիֆիկատը պեփք է ունենա հեփեւյալ ռեկվիզիփները՝ համար, բաժնեփոմսերի քանակը, անվանական արժեքը, էմիսիայի անվանումը, բաժնեփոմսի փեսակը, բաժնեփիրոջ անվանումը, Բանկի երկու պաշփոնատար անձանց սփորագրությունը, Բանկի կնիքը, շրջանառելիության պայմանները:

7. Բաժնեփոմսը անբաժանելի է: Այն դեպքում, երբ միեւնույն բաժնեփոմսը պարկանում է մի քանի անձանց, իրենք բոլորը Բանկի նկարմամբ համարվում են մեկ բաժնեփեր եւ կարող են իրականացնել իրենց իրավունքները իրենցից որեւէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:

8. Ցանկացած բաժնեփիրոջ մասնաբաժնի հաիը չպեփք է գերազանցի Բանկի Կանոնադրական Ֆոնդի 35%-ը:

ՀՈԴՎԱԾ 10. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿԱՋՄԻՑ

ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

1. Բաժնեփիրոջ դուրս գալը Բանկի բաժնեփերերի կազմից իրականացվում է Բաժնեփերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ, բաժնեփիրոջ դիմումի համաձայն: Բաժնեփիրոջ դիմումը դուրս գալու մասին պեփք է ներկայացվի նրա փասփացի դուրս գալուց մեկ ամիս առաջ:

2. Բանկիս Բաժնեփրոջ դուրս գալու դեպքում նրան վճարվում է Բանկի ունեկվածքի արժեքի այն մասը, որը համապատասխանում է իր մուծումին (բաժնեփոմսերի գումարին) Կանոնադրական Ֆոնդում: Վճարումը կատարվում է եռամսյակային հաշվեփվության հասպարումիս հեփո, Բանկի բաժնեփերերի կապմիս Բաժնեփիրոջ դուրս գալուց երեք ամսվա ընթացքում: Բաժնեփիրոջը վճարվում է իրեն հասանելիք շահույթի մասը՝ դուրս գալու պահի դրությամբ: Սրպարժույթով վճարած բաժնեփոմսերի արժեքը, առանց հարկ որոշման, վերադարձվում է բաժնեփիրոջը՝ մուծված արպարժույթի չափով գրավոր դիմում ներկայացնելու պահից 30 օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է եռամսյակային հաշվեփվության հասպարումիս հեփո:

3. Այն բաժնեփերը, որը սիսփեմապիկորեն չի կապարում իր պարփականությունները եւ իր գործողություններով խոչընդոփում է Բանկի գործունեությանը, կարող է հեռացվել Բանկի բաժնեփերերի կապմիս Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի միաձայն ընդունված որոշման համաձայն: Ընդ որում այդ բաժնեփերը քվեարկմանը չի մասնակցում:

4. Բաժնեփիրոջ – իրավաբանական անձի վերակազմավորման կամ լուծարման դեպքում, կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում իրենց իրավահաջորդները կամ ժառանգորդները կարող են մպնել Բանկի բաժնեփերերի կապմի մեջ: Եթե իրավահաջորդը (ժառանգորդը) համաձայն չէ Բանկի բաժնեփերերի կապմի մեջ մպնելու, ապա բաժնեփիրոջը հասանելիք բաժինը փրվում է իրեն՝ հաշվարկված մինչեւ վերակազմավորման (լուծարման) կամ մահվան օրը: Իրավահաջորդի բացակայության դեպքում այդ փայաբաժինը վերադարձվում է փիրոջը, իսկ ժառանգորդի բացակայության դեպքում փնօրինվում է Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի կողմից Բաժնեփերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ: Տվյալ դեպքերում Կանոնադրությանը համաձայն Կանոնադրական Ֆոնդում փոփոխություն է կապարվում:

ՀՈԴՎԱԾ 11. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

1. Բաժնեփերը կարող է վիջել իր բաժնեփոմսերը Բանկի մեկ կամ մի քանի բաժնեփերերին կամ երրորդ անձանց:

2. Բանկի բաժնեփերերը օգփվում են այդ բաժնեփոմսերի ձեռք բերման առաջնահերթ իրավունքից:

3. Բաժնեփոմսերի փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն այն դեպքում, երբ բաժնեփոմսերի արժեքը ամբողջովին վճարված է բաժնեփիրոջ կողմից:

4. Ամբողջությամբ վճարված բաժնեփոմսերը կարող է ձեռք բերել նաեւ Բանկը: Այդ դեպքում Բանկը պարփավոր է այդ բաժնեփոմսերը փոխանցել մյուս բաժնեփերերին կամ երրորդ անձանց ոչ ուշ քան մեկ կապում:

ՀՈՂՎԱԾ 12. ԲԱՆԿԻ ՖՈՆԴԵՐԸ

1. Բանկի կանոնադրական ֆոնդը կազմում է 500,000 հազ.ռուբլի, որը կազմվում է բաժնեթղթերի մուծումներից:

2. Բանկում կազմավորվում են հետևյալ ֆոնդերը.

   ա) Պահուստային (ռեզերվային) ֆոնդ,
   բ) Ապահովագրական ֆոնդ,
   գ) Բանկի վարքագծման եւ սոցիալական ապահովության ֆոնդ,
   դ) Շահաբաժինների վճարման ֆոնդ,

3. Պահուստային ֆոնդը կազմավորվում է Բանկի շահույթից կատարվող հարկացումների (տարեկան 15%) հաշվին կանոնադրական ֆոնդի 100%-ի չափով: Պահուստային ֆոնդը օգտագործվում է Բանկի ֆինանսատնտեսական գործունեությունից առաջացած հնարավոր վնասները ծածկելու եւ այլ պարտավորությունների կատարման համար:

4. Ապահովագրական ֆոնդը ստեղծվում է կանոնադրական ֆոնդի 50%-ի չափով եւ կազմավորվում է Բանկի շահույթից կատարվող հարկացումներից (տարեկան 10%): Ապահովագրական ֆոնդը օգտագործվում է ներգրավված ավանդների եւ տրամադրված վարկերի ռիսկերը ապահովագրելու համար:

5. Բանկի վարքագծման եւ սոցիալական ապահովության ֆոնդը կազմավորվում է Բանկի զուտ շահույթից կատարվող հարկացումների հաշվին: Ֆոնդը օգտագործվում է Բանկի վերակառուցման, ընդլայնման, նյութա-տեխնիկական բազայի կատարելագործման եւ սոցիալական ապահովության նպատակներով:

6. Անհրաժեշտության դեպքում Բանկի խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել այլ ֆոնդեր: Ֆոնդերից յուրաքանչյուրի օգտագործման կարգը եւ ձախսերի նախահաշիվը որոշվում է համապատասխան դրույթներով: Հաշվետու տարվա ավարտից հետո ֆոնդերի մնացորդը փնօրինվում է Բանկի կողմից:

ՀՈՂՎԱԾ 13. ԲԱՆԿԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

1. Բանկի սեփական միջոցներն են.
   ա) այն ունեցվածքը, որը բաժնետերերի (հիմնադիրների) կողմից փրվել է որպես մուծում,
   բ) իր գործունեության ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցները,
   գ) Բանկի գործունեությունից ստացված շահույթի այն մասը, որի հաշվին հաշվարկվել են Բանկի ֆոնդերը:

2. Բանկը իր ունեցվածքի փնօրինումը եւ օգտագործումն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գործող Օրենսդրության համաձայն: Նրա ունեցվածքը ենթակա չէ վարչական կարգով բռնագրավման: Այն կարող է բռնագրավվել միայն դատարանի որոշմամբ:

ՀՈԴՎԱԾ 14. ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1. Բանկի վարկային ռեսուրսներն են.

ա) կանոնադրական եւ այլ ֆոնդերը,
բ) Բանկի հաշիվներում գտնվող ձեռնարկությունների եւ կազմակերպությունների միջոցները,
գ) դեպոզիտներում ներգրավված միջոցները,
դ) ֆիզիկական անձանց ավանդները,
ե) հաշվարկներում գտնվող միջոցները,
զ) այլ ֆինանսավարկային կազմակերպություններից գնված ռեսուրսները,
է) գործառնական տարվա ընթացքում Բանկի չբաշխված շահույթը:

ՀՈԴՎԱԾ 15. ՇԱՀՈՒՅԹԸ ԵՒ ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

1. Պահուստային ֆոնդ կատարվող փոխանցումներից եւ բյուջետային հարկացումներից հետո մնացած շահույթը (մաքուր շահույթը) մնում է Բանկի տրամադրության տակ: Բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշումների համաձայն, մաքուր շահույթից համալրվում են Բանկի ֆոնդերը, իսկ մնացորդը բաշխվում է բաժնետերերի միջեւ՝ շահաբաժինների տեսքով:
Շահաբաժինը բաժնետիրոջը հասանելիք եկամտի մի մասն է՝ իր կատարած մուծման չափին համամասնական: Շահաբաժինը, բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է վճարվել եռամսյակը՝ մեկ, կիսամյակը՝ մեկ կամ տարին մեկ: Շահաբաժինը կարող է վճարվել բաժնետերերի համաձայնությամբ դրամով կամ բաժնետոմսերով՝ անկախ մուծման տեսքից: Շահաբաժինը դրամական տեսքով կարող է վճարվել վճարման հանձնարարագրով, փոստային փոխանցումով եւ կանխիկ դրամով:

ՀՈԴՎԱԾ 16. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

1. Բանկի ֆինանսական տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառումը եւ հաշվետվությունը Բանկում վարվում է ՀՀ կենտրոնական Բանկի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում: Բանկի գործունեության արդյունքները արտացոլվում են ամսեկան, եռամսյակային եւ տարեկան հաշվեկշիռներում, շահույթի եւ վնասների հաշվետվություններում, ինչպես նաեւ տարեկան հաշվետվության մեջ: Բանկը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կազմում եւ հրապարակում է կիսամյակային եւ տարեկան հաշվետվությունները ՀՀ կենտրոնական Բանկի կողմից հաստատված ձեւով: Բանկի տարեկան հաշվետվությունը աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀՈԴՎԱԾ 17. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Բանկի կառավարման բարձրագույն մարմին է հանդիսանում Բաժնետերերի Ընդհանուր ժողովը (կրճատ ԲԸԺ): Այն կազմված է Բանկի բոլոր բաժնետերերից կամ նրանց կողմից նշանակված եւ նրանց երաշխավորագրերով գործող ներկայացուցիչներից: ԲԸԺ-ին կարող են մասնակցել Բանկի կոլեկտիվի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: ԲԸԺ-ն գումարվում է ոչ ուշ, քան տարին մեկ անգամ: ԲԸԺ-ն հրավիրվում է Բանկի խորհրդի, Վերստուգիչ Հանձնաժողովի ինչպես նաեւ 10%-ից ոչ քիչ բաժնետոմսեր ունեցող բաժնետերերի պահանջով: ԲԸԺ-ի բացարձակ իրավասությանն են վերաբերվում հետեւյալ հարցերի լուծումը՝

   - Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
   - Բանկի պլանների եւ դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը,
   - Բանկի Կանոնադրության եւ Կանոնադրական Ֆոնդում փոփոխությունները,
   - Բանկի բաժնետերերի կամ բաժնետերերի ընդունումն ու նրանց ապարտումը,
   - Բանկի խորհրդի անդամների ընտրությունը եւ հետ կանչելը,
   - տարեկան հաշվետվության, հաշվեկշռի, շահույթների եւ վնասների հաշվետվությունների հաստատումը,
   - մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների ստեղծումը եւ լուծարումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
   - Բանկի լուծարման եւ վերակազմավորման մասին որոշումների ընդունումը,
   - Բանկի ֆոնդերին կատարվող հարկադրումների նորմատիվների որոշումը,
   - Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ընտրությունը եւ նրա նախագահի հաստատումը:

   ԲԸԺ-ն համարվում է իրավասու, եթե նրա աշխատանքին մասնակցում է բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների ընդհանուր թվի 2/3-ը: Բանկի խորհրդի ընտրելու, Բանկի Կանոնադրությունը փոփոխելու, նրա գործունեության մասին որոշումների ընդունելու, ինչպես նաեւ Բանկի մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ ստեղծելու մասին որոշումները ընդունվում են Բաժնետերերի Ընդհանուր ժողովում բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների ձայների ոչ պակաս քան 3/4-ով: Մնացած բոլոր հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

2. ԲԸԺ-ի միջեւ ընկած ժամանակաշրջանում Բանկի կառավարման բարձրագույն մարմին է Բանկի Խորհուրդը, որն ընտրվում է ԲԸԺ-ում: Բանկի Խորհրդի կազմի մեջ են մտնում Բանկի բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները եւ Բանկի Պրեզիդենտը՝ Վարչության նախագահը: Բանկի Խորհուրդն ընտրվում է երեք տարով, բաժնետերերի ձայների 3/4-ով, 7 մարդուց ոչ պակաս: Բանկի Խորհուրդը ընտրում է Բանկի Խորհրդի նախագահին եւ Պրեզիդենտի՝ Վարչության նախագահի ներկայացմամբ հաստատում է Վարչության նախագահի տեղակալներին՝ վերահսկողություն իրականացնելով նրանց գործունեությանը: Բանկի Խորհուրդը, ելնելով Բանկի վարկային, հաշվարկային եւ արտարժութային հարաբերությունների հիմնական ուղղություններից, կոորդինացնում է Բանկի գործունեությունը:

3. Բանկի գործադիր մարմին է հանդիսանում Բանկի Վարչությունը, որը կազմված է յոթ հոգուց ոչ պակաս եւ նշանակվում է 3 տարի ժամկետով: Վարչությունը ղեկավարում է Բանկի Նրեկիդենտը՝ Վարչության նախագահը եւ նրա փեղակալները: Նրանք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով, ձայների ոչ պակաս քան 2/3-ով: Վարչությունն իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը: Նախագահը եւ նրա փեղակալները գործում են առանց լրաշխավորագրերի եւ ներկայացնում են Բանկի շահերը երրորդ անձանց, դատարանի եւ պաշտոնական այլ կազմակերպությունների առջեւ, ինչպես նաեւ իրականացնում են Բանկի գործունեության հետ կապված այլ գործողություններ, որոնք չեն հակասում գործող Օրենսդրությանը: Բացառություն են կազմում այն գործողությունները, որոնք անմիջականորեն իրականացնում են ԲԸԺ-ն եւ Բանկի խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 18. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովը, որը կազմված է հինգ հոգուց: Նրա անդամներն ընտրվում են ԲԸԺ-ի կողմից՝ երկու տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Բանկի խորհրդի կամ Բանկի Վարչության անդամները, ինչպես նաեւ Բանկի ղեկավար աշխատակիցները: Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնելու համար կարող է ներգրավել Բանկի այլ աշխատակիցներին, որոնք չեն կատեգորիայում ղեկավար պաշտոններ:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգումներն իրականացնում է.

ա) ԲԸԺ-ի հանձնարարությամբ,
բ) իր սեփական նախաձեռնությամբ,
գ) ԲԸԺ-ի ձայների 10%-ից ավել ունեցող բաժնետերերի պահանջով,
դ) Բանկի խորհրդի հանձնարարությամբ:

Ստուգումները կատարվում են առնվազն տարին մեկ անգամ՝ հանկարծակի եւ պարբերաբար, ըստ տարեկան արդյունքների: Տարեկան հաշվեկշռությունը կարող են ստուգել 22 կենտրոնական Բանկը, ԲԸԺ-ը, անկախ աուդիտորական կազմակերպությունները: Առանց Վերստուգիչ Հանձնաժողովի կամ անկախ աուդիտորական կազմակերպությունների եզրակացության, ԲԸԺ-ը իրավունք չունի հաստատել Բանկի Տարեկան հաշվեկշռությունը (հաշվեկշիռը):

ՀՈԴՎԱԾ 19. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

1. Բանկը լուծարվում է հետեւյալ դեպքերում.

- ԲԸԺ-ի որոշմամբ,
- անվճարունակության դեպքում պետական արբիտրաժի կամ դատարանի որոշմամբ,
- օրենսդրական ակտերով եւ այլ նախատեսված համապատասխան հիմքերով:

Բանկի լուծարումը կատարում է լուծարման հանձնաժողովը: Բանկի կամավոր լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովը նշանակվում է Բանկի կողմից, իսկ հարկադրական լուծարման դեպքում՝ դատարանով կամ արբիտրաժով:
Բանկի առկա դրամական միջոցները, Բանկի ունեցվածքի բաշխումից ստացված հասույթը ներառյալ, բյուջետային հարկացումներ կատարելուց եւ Բանկի աշխատակիցների աշխատանքը վարձատրելուց, ձեռնարկությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց եւ այլ վարկատուների հետ պարտավորությունները կատարելուց հետո, բաշխվում է բաժնետերերի միջեւ լուծարման հանձնաժողովի կողմից, ըստ Բանկի Կանոնադրական ֆոնդում դրանց ներդրումներին համապատասխան: Բանկի լուծարումը համարվում է ավարտված՝ պետական գրանցման փաստաթղթերում (ռեգիստրում) համապատասխան գրանցում կատարելու պահից:

ՀՈԴՎԱԾ 20. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

1. Բանկի գործունեության ընթացքում ծագած վեճերը հայրենական եւ արտասահմանյան կազմակերպությունների, հիմնադիր-ձեռնարկությունների եւ ֆիզիկական անձանց հետ հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս, ինչպես նաեւ Բանկի բաժնետերերի միջեւ, լուծվում են գործող Օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 21. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺ ՍՏԱՆԱԼԸ

1. Կանոնադրությունը կազմված է հինգ օրինակից. երեքը՝ հայերեն, մեկական՝ ռուսերեն եւ անգլերեն: Բոլոր օրինակներն ունեն հավասար իրավաբանական ուժ:
Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցվելու պահից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ - ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
State Shareholders Commercial Import-Export Bank of Armenia

[illegible]ԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Է. Մ. ԱՐԱԲԽԱՆՅԱՆ